

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՐԱԳԱԾԻ ՊԵՌԼԻՏՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ
«ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ

Տնօրեն՝

Լ. ԽՈՐՈՋՅԱՆ

Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	5
Նախատեսվող գործունեության բնութագիրը	7
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	8
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	13
Գտնվելու վայրը	13
Ռեյիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ պայմաններ, սողանքային երևույթներ	18
Կլիման	21
Մթնոլորտային օդ	23
Ջրային ռեսուրսներ	24
Հողեր	25
Բուսական և կենդանական աշխարհ	27
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	29
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	32
Ենթակառուցվածքներ	32
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	36
Պատմության, մշակութային հուշարձաններ	38
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	39
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	42
Օգտագործված գրականության ցանկ	48

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Գետառոդոլատային տիպի հանքավայր՝ գետերի ողողատային տարածք, որը պարունակում է գետի վարարումների հետևանքով կուտակված ավազի (ավազակոպձային, ավազակոպձազլաքարային խառնուրդի) վերականգնվող պաշարներ, որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության,

Էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող` երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին` կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ` հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր` առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում` խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով` տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն` ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ` ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց` երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

Արտադրական լցակույտեր` օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում` պոչանքներ)` տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ **Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը**

Ուսումնասիրվող շրջանը գտնվում է Հայաստանի կենտրոնական հրաբխային գոտու Արագածի բլրկի սահմաններում՝ Արագածի հրաբխային զանգվածի արևմտյան լանջի սարավանդային մասում, որը կազմված է նեոգենի ու չորրորդականի հրաբխային առաջացումներով, և մասամբ վերին չորրորդականի ու ժամանակակից նստվածքներով:

Շրջանի տեկտոնական կառուցվածքում մասնակցում են 2 հիմնական խոշոր կառուցվածքային հարկեր, որոնց միջև նկատվում է կտրուկ տեկտոնական անհամաձայնություն:

Ստորին տեկտոնական հարկը ներկայացված է Արագածի հրաբխային զանգվածի հիմքը կազմող մինչպլիոցենյան ծալքավորված կոմպլեքսով, որի տարբեր հորիզոնների վրա գրեթե հորիզոնական տեղադրված են վերին կոմպլեքսի պլիոցեն-ստորին չորրորդական հասակի հրաբխային առաջացումները՝ տարբեր կազմի լավաները, տուֆերը, տուֆափշրաքարերը, ինչպես նաև լճային, լճագետային նստվածքները:

Շրջանում մերկացող ամենահին առաջացումները ըստ Վ.Մ.Ամարյանի պլիոցենի հրաբխային ապարներն են, ներկայացված Ողջաբերդի (ստորին պլիոցեն) և Արագածի (վերին պլիոցեն) շերտախմբերով:

Ողջաբերդի շերտախմբի ապարների ստորին ենթաշերտը ներկայացված է տուֆաբրեկչիաներով, տուֆակոնգլոմերատներով, որոնք հերթափոխվում են անդեզիտների, կավերի և ավազների հետ: Կտրվածքով դեպի վեր տեղադրված են նույն շերտախմբի վերին ենթաշերտի ռիոլիտները և պեռլիտները: Վերջիններս տարածված են աշխատանքների շրջանում և ունեն ամենալայն մակերեսային տարածում:

Արագածի շերտախմբի անդեզիտաբազալտների և անդեզիտների հոսքերը տարածված են շրջանի կենտրոնական և հարավային մասերում: Բառոժ և Ներքին Թալին գյուղերի հատվածում դրանց հզարությունը հասնում է 15-18 մ-ի:

Չորրորդականի ընթացքում հետախուզվելիք տեղամասերի շրջանում շարունակվել է հրաբխային ակտիվ գործունեությունը: Ստորին չորրորդականը ներկայացված է անդեզիտային և անդեզիտադալիտային կազմի հզոր լավային

ծածկոցով, որը գրավում է ընդարձակ տարածք (250-300 կմ²) Արագած լեռան արևմտյան ստորոտում, ձգվելով Վերին Թալինից մինչև Արագած և Անի կայարանների շրջանը: Ծածկոցի վերին մասում դրանք մուգ մոխրագույնից մինչև սև գույնի են, դեպի ներքև անցնելով մոխրագույնի ու բաց մոխրագույնի հաճախ կապտականաչավուն և երբեմն կարմրավուն երանգներով: Անդեզիտադաջիտների ծածկոցի հզորությունը տատանվում է 50-ից-150մ:

Միջին չորրորդականի կտրվածքի հիմքում հիմնականում Արթիկի տիպի հրաբխային տուֆերն են, որոնք առանձին տեղերում անցնում են պեմզաների: Կտրվածքով դեպի վեր տեղադրված են դաջիտների ու անդեզիտադաջիտների լավային հոսքերը: Վերջիններս և հրաբխային տուֆերը համատարած ծածկոցների և առանձին անկանոն ձևի տուֆակուտակների և լեզվակների ձևով ծածկում են ստորին չորրորդականի անդեզիտների և անդեզիտադաջիտների հողմնահաված մակերեսները, լցնելով հին ռելիեֆի ցածրադիր մասերը: Միջին չորրորդականի ապարների հզորությունը հասնում է 10-15մ:

Վերին չորրորդականի և ժամանակակից առաջացումները ներկայացված են հիմնականում լճային, լճա-ալյուվիալ, ալյուվիալ-պրոլյուվիալ և դելյուվիալ նստվածքներով՝ կավեր, կավավազներ, կոպճաավազներ և այլն:

Դրանք շրջանում ունեն սահմանափակ տարածում և ոչ մեծ հզորություն (0.1մ-ից 1-2մ) և միայն Արտենի լեռան ստորոտներում այն հասնում է մինչև 8-10մ, իսկ հետախուզվելիք տարածքներում դրանց հզորությունը տատանվում է 0.2 մ-ից մինչև 0.8 մ-ի սահմաններում:

Բուն Արագածի պեռլիտների հանքավայրը գտնվում է այդ համալիրի հարավ-արևմտյան մասում: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են նեոգենի և չորրորդական հասակների ապարներ, որոնք ներքևից վերև ներկայացված են հետևյալ կերպ.

ա) վերին միոցենի կավերը ներկայացված են դարչնագույն, թույլ պլաստիկ, միջին հատիկայնության ավազի աննշան խառնուրդով, տեղ-տեղ մանրահատիկ ավազի 1-10սմ հզորության նրբաշերտերով:

բ) ստորին պլիոցենի պեռլիտները կազմում են ամբողջ հանքավայրը:

Ապարն իրենից ներկայացնում է պեռլիտ-պեմզային նյութի անկանոն տեղաբաշխված կուտակ: Այդ նյութը ներկայացված է խոշոր մեծաբեկորներով (0.3-

1.0մ³ չափերով), մեծագլաքարերով (մինչև 0.3մ), բեկորնորով (մինչև 0.2մ), բրեկչիանման և գնդաձև առաջացումներով:

Բեկորային նյութը թույլ ցեմենտացված է պեռլիտ-պեմզային թեթև ավազով, որը լցնում է միջբեկորային տարածությունը: Բեկորային նյութը կազմում է ապարի ընդհանուր զանգվածի մոտ 65%-ը:

Մակրոսկոպիկ հանքավայրի պեռլիտները ներկայացված են հոծ զանգվածով տարբեր չափերի գնդաձև անջատումներով, որոնց մեջի հատիկներն ունեն ապակյա փայլ:

Ապարի գույնը բաց մոխրագույն, մոխրագույն է, ավելի հազվադեպ բաց դարչնագույն՝ վարդագույնի և երկնագույնի երանգներով:

Հանքավայրի տարածքում պեռլիտների փխրուն տարատեսակների մեջ հսկայական ժայռերի և սյուների տեսքով անկանոն մերկանում են պեռլիտների հոծ, գորշ տարատեսակներ:

զ) վերին պլիոցենի օբսիդիանները հանքավայրի պեռլիտներում հանդիպում են տարբեր մեծության մարմինների տեսքով: Ձևաբանորեն դրանք ներկայացված են փոքր չափերի գմբեթաձև, դայկանման մարմիններով: Այդ ապարները խիստ բրեկչիացված և ջարդոտված են:

Մակրոսկոպիկ օբսիդիանները մոխրագույն, գորշ, դարչնագույն, սև և այլ գույների ապակեման ապարներ են:

դ) Ժաանակակից դելյուվիալ-ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները հիմնականում զարգացած են բլուրների և բլրակների լանջերի հարաբերական հարթավայրային մասերում և սելերի հուններում: Դրանք ներկայացված են թույլ տեսակավորված, երբեմն ոչ տեսակավորված նյութերով՝ ավազակավերով, կավերով, անկյունաձև կիսամշակված և մշակված բեկորներով, մեծաբեկորներով ու մեծագլաքարերով: Այս առաջացումների հզորությունը տատանվում է 0.0-ից 10.0մ-ի սահմաններում:

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում արդյունաբերական նշանակություն ունեցող պաշարների հայտնաբերման նպատակով նախատեսվում է իրականացնել հետևյալ տեսակի աշխատանքներ.

- 1 :2000 մասշտաբի երկրաբանահանութային և տոպագրաֆիական աշխատանքներ տեղամասերի 102.72հա տարածքում,
- 1:2000 մասշտաբի 30կմ որոնողական երթուղիներ, հանքային դաշտի երկրաբանական կառուցվածքի և ապարների սահմանների ճշտման համար,
- 1:2000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմում՝ հետախուզափորվածքների և ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ,
- 1-ին և 2-րդ կարգի տրիանգուլյացիոն ցանցի ստեղծում,
- 93 և 76մ տրամագծով ալմաստե թագիկներով 60-ական մետր երկարությամբ 15 հորատանցքերի հորատում, ընդհանուր 900գծ.մ ծավալով,
- ամրակապող խողովակների կապում և հեռացում յուրաքանչյուր հորատանցքի համար, միջինը 5գծ.մ. (5 x 15), ընդամենը 75 գծ.մ,
- ինքնագնաց հորատող հաստոցի 15 տեղակայում և ապատեղակայում,
- 60 նմուշի վերցնում հորատանցքերից,
- քիմիական անալիզ – 5 նմուշ,
- պետրոգրաֆիական ուսումնասիրություններ – 4 նմուշ,
- ֆիզիկամեխանիկական փորձարկումներ – 60 նմուշ,
- աշխատանոցային աշխատանքներ՝ ամբողջ փաստացի նյութի ընդհանրացումը և համակարգումը, երկրաբանական հաշվետվության կազմումը իր համապատասխան ներդիր քարտեզներով, հատակագծերով, կտրվածքներով,
- 15 հորատման հարթակների կառուցում,
- 3կմ ճանապարհների նորոգում,
- ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանների /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանում նպատակով դիտարկումների իրականացում,
- ռադիոմետրական չափումներ՝ ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար,
- ռեկուլտիվացիա 720մ² մակերեսով կամ 144մ³ ծավալով,
- փոխհատուցում հողօգտագործման վնասի համար՝ 25200դրամ:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:
- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:
- ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:
- «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն

հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

- «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:
- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:
- «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159, 24.11.2004թ.), որով կարգավորվում են կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

- ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ.-ի թիվ 365-Ն հրաման, որով կարգավորվում են շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընդերքօգտագործողների կողմից նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:
- ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվում են ՀՀ տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:
- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 23.08.2012թ.-ի N1079-Ն որոշում, որով կարգավորվում են Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝ դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ **Գտնվելու վայրը**

Արագածի պեռլիտների հանքավայրի «ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» պեռլիտների 1-ին և 2-րդ տեղամասերը գտնվում են ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանում, Արագածավան գյուղից 4կմ հյուսիս-արևելք: Տեղամասերը տեղադրված են Արտենի լեռան հարավ-արևմտյան լանջի 1350-1380մ բարձրությունների վրա (նկար 1-3):

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման նպատակով հայցվող տարածքին շրջանում են գտնվում Հակո, Կանչ, Թաթուլ (Արեգ), Արևուտ (Բարձ) և Արտենի բնակավայրերը:

Երկրաբանական ուսումնասիրությունների համար ընտրված տարածքը բնութագրվում է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (ըստ Arm WGS-84 համակարգի).

1-ին տեղամաս


Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
1	4470241.7000	8389336.1000
2	4470272.9000	8389322.5000
3	4470298.6000	8389321.2000
4	4470332.4000	8389325.2000
5	4470382.4000	8389330.6000
6	4470423.2000	8389332.1000
7	4470448.1000	8389328.7000
8	4470509.8000	8389299.7000
9	4470578.2000	8389265.4000
10	4470612.6000	8389266.7000
11	4470652.2000	8389268.0000
12	4470724.7000	8389293.1000
13	4470765.6000	8389305.0000
14	4470860.5000	8389360.4000
15	4470963.1000	8389380.4000

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
16	4470927.5000	8389948.1000
17	4470928.2000	8390343.6000
18	4470794.7000	8390689.9000
19	4470722.5000	8390684.4000
20	4470701.4000	8390668.8000
21	4470664.8000	8390656.0000
22	4470628.2000	8390657.8000
23	4470600.7000	8390661.5000
24'	4470275.0000	8390650.1000
25'	4470275.1000	8390347.6000
26'	4470285.5000	8389971.2000
27'	4470299.0000	8389604.8000
28'	4470175.5000	8389598.6000
29'	4470163.3000	8389392.9000
1	4470241.7000	8389336.1000

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ ARAGATZOTN MARZ

Մարզկենտրոնը ԱՇԱՐԱԿ
3 բաղաք, 117 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների
երկարությունը՝ 498կմ

ASHTARAK the center
3 cities 117 settlements
Instate roads 496km



Նկար 1.

2-րդ տեղամաս

Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
1	4467513.9000	8391050.0000
2	4467523.2000	8391045.7000
3	4467537.5000	8391042.7000
4	4467584.8000	8391038.5000
5	4467634.6000	8391040.0000
6	4467630.3000	8391031.0000
7	4467635.8000	8390955.5000
8	4467643.0000	8390880.5000
9	4467633.8000	8390865.8000
10	4467594.0000	8390818.2000
11	4467542.1000	8390764.0000
12	4467514.0000	8390693.2000
13	4467523.2000	8390643.8000
14	4467530.6000	8390599.0000
15	4467529.8000	8390563.6000
16	4467531.0000	8390540.7000
17	4467529.8000	8390528.2000
18	4467525.8000	8390517.4000
19	4467520.1000	8390507.9000
20	4467514.0000	8390500.8000
21	4467505.6000	8390501.4000
22	4467470.8000	8390504.2000
23	4467440.4000	8390517.1000
24	4467407.3000	8390535.8000
25	4467374.9000	8390551.6000
26	4467372.7000	8390534.7000
27	4467368.5000	8390532.1000
28	4467354.9000	8390553.9000
29	4467340.9000	8390578.2000
30	4467321.9000	8390610.0000
31	4467301.1000	8390643.8000


Հ/Հ	Կոորդինատներ	
	X	Y
32	4467295.7000	8390656.7000
33	4467292.5000	8390673.1000
34	4467290.9000	8390695.3000
35	4467291.4000	8390722.5000
36	4467292.4000	8390729.4000
37	4467296.3000	8390739.7000
38	4467304.8000	8390756.5000
39	4467316.3000	8390778.1000
40	4467319.0000	8390789.1000
41	4467324.2000	8390803.5000
42	4467327.8000	8390817.0000
43	4467329.9000	8390835.4000
44	4467330.8000	8390868.4000
45	4467332.1000	8390878.1000
46	4467336.2000	8390890.8000
47	4467349.3000	8390924.5000
48	4467366.8000	8390966.2000
49	4467376.1000	8390994.8000
50	4467384.5000	8391021.6000
51	4467389.2000	8391046.6000
52	4467395.2000	8391071.0000
53	4467400.0000	8391088.6000
54	4467402.8000	8391094.7000
55	4467407.0000	8391099.1000
56	4467413.7000	8391101.2000
57	4467424.2000	8391101.6000
58	4467433.9000	8391101.0000
59	4467442.0000	8391099.7000
60	4467450.2000	8391095.0000
61	4467470.8000	8391080.1000
1	4467513.9000	8391050.0000

Ի Ր Ա Վ Ի Ճ Ա Կ Ա Յ Ի Ն Հ Ա Տ Ա Կ Ա Գ Ի Տ

(հատված K-38-124- B-r և K-38-136- A-6 թերթերից)

Մասշտաբ 1:25000

Վերը ընտանային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

- Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածքներ
- «ԶԻՒՆ ԳՈՒՆ» տեղամաս
- «ԱՐԱԳԱՏ ՊԵՌՆԻՍ ԳՐՈՒՄ» տեղամաս

Նկար 2.

Նկար 3-ում ներկայացված են 1-ին և 2-րդ տեղամասերի հեռավորությունների բնակավայրերից, Թալինի ջրանցքի ձախ ճյուղից, Թալինի ջրանցքից, Սելավ-Մաստարայի հիմնական հունից, «Հիդեն Գուր» և «Արագած պեոլիտ» տեղամասերից :



Նկար 3.

▪ *Ռելիեֆ, երկրաձևաբանություն, սեյսմիկ պայմաններ, սողանքային երևույթներ*


Արագածի պեոլիտների հանքավայրի «ԱՐԱԳԱԾ ՊԵՌԼԻՏ ԳՐՈՒՊ» պեոլիտների 1-ին և 2-րդ տեղամասերի շրջանը տեղադրված է Արտենիի հրաբխային զանգվածի հարավ-արևմտյան լանջին՝ 1350-1380մ բարձրությունների վրա, Արագած լեռնազանգվածի ստորոտին: Արագած լեռան 2500-300մ բարձրություններից սկսվում են լեռնազանգվածի սանդղակերպ ցածրացող փոքրաթեք լանջերը՝ իրենց վրա բարձրացած տասնայկ խարամային և էքստրուզիվ (Մեծ և Փոքր Արտենի) կոներով: Մերձգագաթային սարահարթերը և մեղմաթեք լանջերը մասնատված են ճառագայթաձև տարածվող, մեծ թվով խոր հովիտներով, որոնք իրենց վերին մասերում ունեն տաշտակաձև, իսկ միջին և ստորին մասերում՝ V-աձև լայնական կտրվածք: Հարավային և արևմտյան լանջերում լայն տարածքում ունեն չոր ձորերը, որոնց մի մասը հեղեղաբեր է: Ստորոտներին դիտվում է հնագույն սառցապատումների հալոցքային ջրերի բերվածքներ:

Արտենի լեռը հանգած հրաբուխ է Արագածի հարավ-արևմտյան ստորոտին: Բարձրությունը 2047 մ է, հիմքի տրամագիծը՝ մոտ 10 կմ: Առաջացել է վերին նեոգենում, կազմված է լիպարիտային լավաներից և նրանց տարատեսակներից: Արտենիից սկիզբ են առնում լավային հոսքեր, որոնցից գլխավորը Արագածի հոսքն է՝ ներկայացված օբսիդիանով և պեոլիտային ազլումերատով: Հոսքի երկարությունը 7-8կմ է, միջին հզորությունը՝ 50մ:


Շրջանի ծալքաբեկորային լեռների ձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4-ում և 5-ում:

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի հրամանի հավելված 1-ի և հավելված 2-ի՝ երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքները գտնվում են 1-ին սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի սպասվելիք արագացման մեծությունը կազմում է 0.3g (նկար 6):


Սողանքային երևույթներ հայցվող տարածքներում չեն արձանագրվել: Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) ամենամոտ սողանքային մարմինը քարտեզագրվել է ավելի քան 25կմ հեռավորության վրա՝ Գառնահովիտ գյուղի մոտակայքում:



Նկար 4.



Նկար 5.



Նկար 6.

- **Կլիմա.** Տեղամասերի շրջանի կլիման ցամաքային է, չափավոր տաք, չոր ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով, կայուն ձնածածկույթով:

Օդի տարեկան միջին ջերմաստիճանը նախալեռնային գոտում +8.4°C-ից +11.3°C է, իսկ բարձր լեռնատափաստանային գոտում՝ +4.8°C-ից +7.8°C: Նվազագույն ջերմաստիճանը գրանցվել է -27°C է, իսկ առավելագույնը՝ +39°C: Օդի ջերմաստիճանի օրական տատանումների ամպլիտուդան մեծ է, առավելագույնը դիտվում է սեպտեմբերին՝ 17°C:

Կլիմայական գոտիների բաշխման սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 6-ում:

Ստորև 1-4 աղյուսակներում ամփոփված են տեղեկատվություններ օդի ջերմաստիճանի, մթնոլորտային օդի հարաբերական խոնավության, քամիների և տեղումների վերաբերյալ (ըստ մոտակա «Արագած երկաթգծային» և «Թալին» կայանների տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
-5.9	-3.8	1.7	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.5	4.4	-2.6

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը


Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
76	73	37	31	60	55	51	49	52	60	72	77

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը

Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան													Ձնածածկույթ		
Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
22	24	29	50	69	44	27	16	15	31	24	19	370	43	57	133
21	29	25	40	36	64	44	30	29	37	23	23	64			

Քամիներ

Կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
			Ուղղությունները							
			Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
Թալին	834.9	հունվար	29	9	13	27	11	3	3	5
			2.4	2.2	2.6	2.9	2.1	2.2	2.6	3.6
		ապրիլ	22	8	13	27	15	4	4	7
			3.3	2.4	2.6	3.6	2.9	3.5	3.2	4.1
		հուլիս	31	8	9	25	12	3	3	9
			3.5	2.6	2.4	3.2	2.4	2.7	3.7	4.1
հոկտեմբեր	31	9	10	22	15	3	3	7		
	2.9	2.2	2.4	3.0	2.2	2.8	2.7	3.9		
Անհողմությունների կրկնելիությունը, %		Միջին ամսական արագությունը, մ/վ		Միջին տարեկան արագությունը, մ/վ				Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր		
50		1.5		1.9				49		
33		2.2								
36		2.2								
42		1.8								



Նկար 6.

- **Մթնոլորտային օդ**

Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքում և հարակից շրջանում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկման կայաններ չկան: Տեղամասերի շրջանում արտանետումների հիմնական աղբյուրը Արագածի պեռլիտի հանքավայրն ու գործարանը, որը շահագործվում է «Արագած Պեռլիտ» ԲԲԸ կողմից: 2015 թվականի թույլտվության համաձայն՝ «Արագած պեռլիտ» ԲԲԸ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութերի մթնոլորտ արտանետելու չափաքանակներն են. անօրգանական փոշի 9.5տ/տարի, կախված մասնիկներ 0.3տ/տարի, ածխածնի օքսիդ 3.867տ/տարի, ծծմբային անհիդրիդ 11.172տ/տարի, ազոտի օքսիդներ 1.017տ/տարի:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 5.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Տեղամասի տարածքին ամենամոտ գտնվող բնակավայրերը Արագածավան, Հակո և Կանչ բնակավայրերն են, որտեղ մշտական բնակչությունը ըստ պաշտոնական տվյալների չի գերազանցում 6000 մարդ:

Տեղամասերի տարածքի մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են. փոշի 0.09մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.0085մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.0054մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.1մգ/մ³:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են

ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները: Ըստ նշված փաստաթղթի բնակավայրերում անօրգանական փոշու (SiO_2 պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՄԹԿ կազմում է 0.15մգ/մ^3 , միջին օրեկան ՄԹԿ՝ 0.05մգ/մ^3 :

- **Ջրային ռեսուրսներ**

Հայցվող տեղամասերի շրջանը սակավաջուր է: Հիմնական ջրագրական միավորը Սելավ Մաստարան գետն է, որի ջրհավաք ավազանի մակերեսը կազմում է 1635կմ^2 : Գետի ակունքն ընկած է Արագածի լեռնազանգվածի հարավային լեռնալանջերի վրա՝ $3100-3300$ մ բարձրություններում, իսկ ավազանի ամենացածր կետը ընկած է Մեծամոր գետի ակունքներին մոտ տարածքում՝ 849 մ բարձրության վրա:

Սելավ-Մաստարան իրենից ներկայացնում է ժամանակավոր գործող հեղեղատային գետահուն: Առկա վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձրևային 70 հորդացումների ժամանակ կարող է դիտվել $40\text{մ}^3/\text{վ}$ և ավելի ելք, ապա խոշոր սելավների ժամանակ կարող է դիտվել $170\text{մ}^3/\text{վ}$ ելք (1955թ.):

Գետի ջրհավաք ավազանի որոշ հիդրոգրաֆիական բնութագրիչները ներկայացված են ստորև աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6.

Ակունքի նիշը, մ	Գետաբերանի նիշը, մ	Միջին բարձրություն, մ	Ավազանի մակերես, կմ ²	Երկարություն, կմ
3289	849	1517	1635	98

Սելավ-Մաստարայի հոսքի ձևավորման մեջ մեծ է ձնածածկույթի դերը: Միջին հաշվով գետի սնուցման ավելի քան 40%-ը բաժին է ընկնում ձնահալոցքային ջրերին, քանի որ գետային հոսքի ձևավորման համար ձյան պաշարների կուտակման հիմնական գոտին $1800-2800$ մ ընկած բարձրություններն են, հոսքի մնացած ծավալի մեջ իր հսկայական դերն ունեն անձրևային ջրերը, և հատկապես հորդառատ անձևները, որոնք նպաստում են սելավների ձևավորմանը: Սակավաջուր ժամանակահատվածում գետը գրեթե չորանում է: Մաստարայի սելավները կրկնվում են մոտավորապես 2-3 տարին մեկ անգամ: Մաստարայի սելավի մասին տեղեկություններ կան դեռևս 1905թ., որոնք բոլորն էլ եղել են ցեխաքարային բնույթի: Սելավ-Մաստարայի սելավային հոսքերը

հիմնականում ձևավորվում են զարնանային և ամառային հորդառատ անձրևների հետևանքով, հազվադեպ նաև ձնահալոցքային ջրերից: Հիդրոլոգիական տարեգրերում առկա է տեղեկատվություն, որ Սելավ-Մաստարայում դիտվել է 165-170մ³/վ սելավային ելքեր:

Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքն արևելքից և արևմուտքից սահմանափակվում են Սելավ-Մաստարայի չորահուններով:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքը համարվում է լավ ինֆիլտրացվող գոտի, ինչը պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ապարների ֆիզիկամեխանիկական հատկություններով, ծակոտկենությամբ: Տեղամասերի տարածքից մթնոլորտային տեղումները՝ ինֆիլտրացվելով չեղքավորված, ծակոտկեն տուֆերի հաստվածքով, բեռնաթափվում են չորահուններում:


Հայցվող տեղամասերի շրջանում են գտնվում Թալինի ջրանցքի ձախ ճյուղը, որը հարավից սահմանափակում է 2-րդ տեղամասը, և Թալինի թունելը: Հիդրոտեխնիկական կառույցների. Սելավ-Մաստարա գետի և տեղամասերի միջև առկա հեռավորությունները ներկայացված են նկար 3-ի իրավիճակային հատակագծում:

▪ **Հողեր.** Տարածքի հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն և շագանակագույն, գորշ կիսաանապատային հողերով: Հողերի բնական տիպերի բաշխվածությունը երկրաբանական ուսումնասիրության համար ընտրված շրջանում բերված է նկար 7-ում:

Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին տեղամասի հողային ծածկույթը ներկայացված է բաց-շագանակագույն քարքարոտ քարածին-բեկորային հողերով: Հողի հնարավոր բերրի շերտը շատ փոքր է, առավելագույնը կազմում է 0.2մ: Հողի շերտի հետ խառնված են պեռլիտի և օբսիդիանի հրաբխային զանգվածը: Առանձին հատվաններում հրաբժային հաստվածքի ապարները մերկացած են: Հողը հազեցած է հողալկալի հիմքերով, հումուսի պարունակությունը կազմում է 2.7%, CO₂-ը՝ 5.3%, կլանված հիմքերի գումարը 32.5մգ/էկվ 100 գ հողում:

2-րդ տեղամասում տարածված են 0.15մ առավելագույն հզորությամբ գորշ կիսաանապատային քարքարոտ, կարբոնատային-ցեմենտացված հողերը:

ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ



- ① Մուգ-շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ② Շագանակագույն քարքարոտ քարածին - բեկորային և կարբոնատային - ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ③ Շագանակագույն քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ④ Շագանակագույն քարքարոտ փոքր հզորության ավազկավային թույլ հողմահարված մշակովի
- ⑤ Շագանակագույն միջին հզորության կավային մշակովի
- ⑥ Բաց-շագանակագույն քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑦ Բաց-շագանակագույն քարքարոտ քարածին - բեկորային և կարբոնատային - ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑧ Բաց-շագանակագույն քարքարոտ միջին հզորության կավավազային մշակովի
- ⑨ Գորշ կիսաանապատային տիպիկ քարքարոտ, կարբոնատային - ցեմենտացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑩ Գորշ կիսաանապատային տիպիկ քարքարոտ վերափոխված կավավազային մշակովի
- ⑪ Արմատական ապարների ելքեր և թերի զարգացած քարքարոտ հողեր

Նկար 7.

Այս հողերը ունեն հիմնականում կավավազային մեխանիկական կազմ, զգալի կմախքային զանգվածի պարունակությամբ: Ստրուկտուրան փոշեհատիկային կամ վառողանման է, ջրակայուն ագրեգատների քանակը չի գերազանցում 32.3%: Առանձին տեղերում հողի խորը շերտերում հաճախ բավական քանակությամբ ջրալույծ աղեր են կուտակվում (մինչև 1-1.5%), որոնք գլխավորապես ներկայացված են CaSO_4 , MgSO_4 և այլ աղեր: Հումուսի պարունակությունը չնչին է՝ 1.1%, CO_2 -ի պարունակությունը կազմում է 2.7%, CaSO_4 -ի պարունակությունը՝ 0.06%, կլանված հիմքերի գումարը 27.4մգ/էկվ 100 գ հողում: Հողերը քարքարոտ են, հանդիպում են ինչպես մակերեսային, այնպես էլ թաղված և կիսաթաղված քարեր:

Տեղամասերի հողերից վերցված նմուշներում աղտոտիչ հանդիսացող ծանր մետաղներ (Cu, Pb, Zn, Hg, Mn) չոն արձանագրվել :

- ***Բուսական և կենդանական աշխարհը***

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տեղամասերի բուսականությունը ներկայացված է կիսաանապատային օշինդրա-էֆեմերային բուսականությամբ (նկար 8): Հիմնական տարածված բույսը *Artemisia fragrans* է, խոտային համակեցությունների կազմում մասնակցում են նաև *Xeranthemum squarrosum*, *Taeniatherum crinitum*, *Euphorbia marschalliana*, *Kochia prostrata*, *Koelpinia linearis*, *Ceratocephala falcate*:

Տարածքների խոտածածկում մասնակցող բույսերը վաղամեռ են: Տարածքի բուսականությունը վաղ գարնանը բավականին փարթամ տեսք ունի, սակայն ամռան շոգերն ընկնելուն պես էֆեմերներն ամբողջությամբ խանձվում են:

Արտենիի հրաբխային զանգվածի շրջանում հայտնի են ՀՀ Կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- տերեփուկ Թախտաջանի – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, լոկալիտներ Արտենի լեռան գագաթին և Հակո գյուղի տարածքում: Ամենամուտը Հակո գյուղի լոկալիտն է, 1-ին տեղամասից այն գտնվում է մոտ 2.4կմ հեռավորության վրա, 2-րդ տեղամասից՝ ավելի քան 5.5կմ,
- Ճուռակախոտ փրչոտ, տուղտավարդ Սոֆիայի և հիրիկ նրբագեղ – վտանգված տեսակներ, լոկալիտները գտնվում են Արտենի լեռան գագաթին (տեղամասերից ավելի քան 5կմ հեռավորության վրա),
- զանգակ Մասալսկու և խլոպուզ Գրոյտերի - կրիտիկական վիճակում գտնվող տեսակներ են, աճում են Արտենի լեռան գագաթին (տեղամասերից ավելի քան 5կմ հեռավորության վրա):

Տեղամասերի շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է սակավաթիվ տեսակներով: Դիտվել է կույր օձուկ և մողես օձ, բազմաթիվ անգամ հանդիպել է խայտաբղետ կարիճ: Հակո և Կանչ գյուղերի բնակիչների պնդմամբ այստեղ տարածված է թունավոր սև կարիճը: Կաթնասուններից արձանագրվել են ավազամուկ և աղվես. Արագածավան և Արտենի գյուղերի այգիներում՝ սովորական դաշտամուկը: Թռիչքում նշվել է սովորական երկարաթև չղջիկ: Մշակվող, այգիներով զբաղեցրած տարածքներում բնադրում են արտույտներ, շամփրուկ, սոխակ:

Միջատներից նշվել են եգիպտական խավարասեր, ադոթարարներ, անապատային ճռիկ: Հակո և Կանչ գյուղերի անասնապահության համար օգտագարծվող տարածքներում՝ գոմաղբով հարուստ հողածածկություն հանդիպում են սկարաբեյներ, բազմաթիվ են մրջյունները:

Արտենի լեռան, Հակո, Կանչ և Արագածավան գյուղերի տարածքներում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների ապրելավայրեր հայտնի չեն:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Արագածի պեոլիտի հանքավայրի «Արագած Պեոլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերի տարածքը, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում: Բնության հատուկ պահպանվող տարածքներից տեղամասին ամենամոտ գտնվողը «Արագածի ալպյան» պետական արգելավայրն է, որը կազմավորվել է 1959 թվականին Արագած լեռան սառցադաշտային Քարի լճի և հարակից ալպյան մարգագետինների պահպանության նպատակով: Այն գտնվում է երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքներից ավելի քան մոտ 40կմ հեռավորության վրա:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

ՀՀ Արագածոտնի մարզում են գտնվում հետևյալ հուշարձանները.


Աղյուսակ 7.

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1	2	3
1.	«Տափակ Բլուր» լիպարիտային գմբեթ	Արագածոտնի մարզ, Թաթուլ գյուղից 2.0 կմ հվ-արմ
2.	«Բազալտե արև», եզակի ճառագայթաձև անջատում	Արագածոտնի մարզ, Բյուրական գյուղից 7 կմ հս, Արխաշան գետի ձախափնյա մասում Ամբերդ ամրոցի մոտ
3.	«Տատիկ» քարե բնական քանդակ	Արագածոտնի մարզ, Դաշտաղեմ գյուղի հվ-արլ եզրին
4.	«Փոքր Արտենի» հրաբուխ	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2.5 կմ հվ-արմ

1	2	3
5.	«Քարե կարկուտ» տեքստուրային	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից

	առանձնահատուկ ներփակումներ	մոտ 3.0 կմ հս-արմ
6.	Արայի լեռան խառնարանը	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղից 6 կմ հս-արլ
7.	«Անանուն» ժայռ-մնացուկներ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4.5 կմ հվ-արմ, Արայի լեռ, հրաբխի հարավային լանջերին
8.	«Անանուն» էրոզիոն աշտարակ	Արագածոտնի մարզ, Սարալանջ գյուղից 4 կմ արմ
9.	«Զինգիլային դաշտ» քարե կուտակումներ	Արագածոտնի մարզ, Քուչակ գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ
10.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռ (2047մ), քարեդարյան (օլիգոցեն) հասակի եզակի հնագիտական հուշարձաններ
11.	«Ամբերդ» լիճ	Արագածոտնի մարզ, Բյուրականից մոտ 2.1 կմ հս-արմ, Արագած լեռան հվ-արմ մերձկատարային սարավանդին
12.	«Լեսինգ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 11 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի հս-արլ լանջին
13.	«Ումրոյ» լիճ	Արագածոտնի մարզ, Ծաղկաշեն գյուղից մոտ 8 կմ հս-արմ, Արագած լեռնազանգվածի արլ լանջին
14.	«Գեղարոտի» ջրվեժ	Արագածոտնի մարզ, Արագած գյուղից 11 կմ հս-արմ
15.	«Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն	Արագածոտնի մարզ, Արևուտ գյուղից 2 կմ հվ-արմ
16.	«Արտաշավան» բնապատմական համալիր	Արագածոտնի մարզ, Արտաշավան գյուղի արլ եզրին
17.	«Աստվածընկալ» հրաբխային տուֆերի ստվարաշերտ	Արագածոտնի մարզ, Հարթավան գյուղից մոտ 4 կմ դեպի արլ
18.	«Քասախի դարավանդներ»	Արագածոտնի մարզ, Օհանավան գյուղի արլ եզրին
19.	«Քասախի կիրճ»	Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ

Արագածի պեոլիտի հանքավայրի «Արագած Պեոլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերին ամենամոտ գտնվող բնության հուշարձանները «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոնն է և «Փոքր Արտենի» հրաբուխը: Հայցվող տեղամասերի և բնության հուշարձանների միջև հեավորությունները ներկայացված են նկար 9-ում :



Նկար 9.

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

▪ *Ենթակառուցվածքներ*

Օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տեղամասը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում:

Մարզի տարածքը 2,756 քառ.կմ, ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը կազմում է (9.3%):

Գյուղատնտեսական նշանակության հողատարածքը՝ 218,218.8 հա է (կամ մարզի տարածքին շուրջ 79.2%), որը կազմում է ՀՀ-ի՝ 2,045,472.2 հազար հա-ի 10,67 %-ը, այդ թվում՝ վարելահողեր 54,105.7 հա: Բնակավայրերի հողերը կազմում են մարզի հողերի շուրջ 6.3%, իսկ անտառային հողերը շուրջ 3.95%:

ՀՀ Արագածոտնի մարզն ընդգրկում է Աշտարակ, Ապարան, Արագած և Թալին տարածաշրջանները: Մարզում առկա է 114 համայնք որից քաղաքային՝ 3:

Մարզում առկա է 29 արհեստական ջրամբար՝ ամենամեծը Ապարանի ջրամբարն է՝ մակերեսը 7,9 քառ. կմ է, ընդհանուր ծավալը՝ 91 մլն.մ/իս, օգտակարը՝ 81 մլն.մ/իս, ջրթողունակությունը վայրկյանում 18 խորանարդ մետր: Ջրամբարի ամբարտակը հողային է, բարձրությունը՝ 50մ, երկարությունը՝ 200մ: Տարեկան մարզում առկա ոռոգման ջրի ծավալը կազմում է մոտ 520 մլն.մ/իս: Արագածի մերձգագաթային սարավանդի վրա գտնվում է Քարի լիճը: Նշված ծավալի ոռոգման ջրից տարեկան օգտագործվում է մոտ 85մլն.մ/իս-ն, առկա քանակության 16%-ի չափով: Մնացած քանակությունը կորչում է գոլորշիացման տեսքով կամ դուրս գալիս մարզի տարածքից: Մարզի տարածքով է անցնում Արգնի-Շամիրամ ջրանցքը, գործում է նաև Թալինի ջրանցքը:

ՀՀ Արագածոտնի մարզում մշտական բնակչության թվաքանակը կազմում է՝ 129.8 հազ. մարդ այդ թվում՝ քաղաքային 29.1 հազ. մարդ (22.4%), գյուղական՝ 100.7 հազ. մարդ (77.6%): ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը կազմում է (4.3%): Ազգաբնակչության 93,7%-ը հայ են: Մարզում բնակվում են նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ՝ հիմնականում եզդիներ և այլն:

Բնակչության մեծամասնությունը կուտակված է Աշտարակի և Ապարանի տարածաշրջաններում, բնակչության խտությունը կազմել է՝ (36-89 մարդ 1 կմ²), այստեղ

են բնակվում մարզի բնակչության շուրջ 64% մակերեսով կազմում է մարզի 46.5 %: Ամենացածր խտությունը՝ Արագածի տարածաշրջանում է կազմել է՝ (3 մարդ 1 կմ²) և Թալինի տարածաշրջանում կազմել է՝ (30 մարդ 1 կմ²):

ՀՀ Արագածոտնի մարզի տարածքով են անցնում հանրապետական նշանակություն ունեցող 3 ավտո-խճուղիները՝ Երևան – Աշտարակ – Թալին – Գյումրի, Երևան–Աշտարակ – Սպիտակ և Երևան – Արմավիր –Քարակերտ – Գյումրի: Մարզի տարածքը արևմտյան հատվածով հատում է նաև ՀՀ գլխավոր երկաթուղին շուրջ 30 կմ, որը սակայն չի թողնում էական ազդեցություն մարզի տնտեսական զարգացման վրա:

Մարզի բնակչության շուրջ 87% հնարավորություն ունի օգտվելու կանոնավոր իրականացվող երթուղիներից:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ (Վիվա սելլ / USU ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Մարզի բնակավայրերը 98%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով /օպտիկամանրաթելային և եթերային-շարժական/: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Լարային հեռախոսակապ ապահովում է «Արմենթել» ՓԲԸ (Beeline ապրանքանիշ) և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն (Ռոստելեկոմ ապրանքանիշ): Լարային հեռախոսակապով ապահովված են մարզի բնակավայրերի 88%-ը:

Մարզի 114 համայնքներում գործում է «Հայփոստ» ՓԲԸ մասնաճյուղերը, ապահովելով մարզի համայնքների 100% ծածկույթը:

Եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածքային բաժնի կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 92% ծածկույթը:

Հեռարձակվում է թվային 8 ծրագիր, ինչպես նաև Աշտարակում՝ կաբելային «ԱշտարակԷլիտTV» տեղական ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև «Հանրային ռադիոն», որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների

Էլեկտրամատակարարմամբ: Մարզում առկա է Էլեկտրաէներգիայի բաշխման զարգացած ցանց:

Ներկայումս ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն, Արագածոտնի մարզում տարեկան 38.9 մլն. կՎտժ Էլեկտրական էներգիա են արտադրում 6 փոքր հիդրոէլեկտրակայաններ՝ մոտ 15.95 ՄՎտ ընդհանուր հզորությամբ, որը կազմում է Հայաստանի ՓՀԷԿ երի արտադրած ընդհանուր 977 000 ՄՎտժ էներգիայի շուրջ 4%:

Գազաֆիկացման մակարդակը մարզում բավականին ցածր է, 114 համայնքներից 61-ը (53,5%) գազիֆիկացված են, որտեղ բնակվում են մարզի բնակիչների շուրջ 63,9 %:

Մարզի տարածքում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման համար գործունեություն է իրականացնում «Էկոլոգիա ՎԿՀ-ի» ՍՊԸ-ն, որը մարզի և հանրապետության այլ վայրերի բուժսպասարկման կազմակերպություններից՝ պայմանագրային սկզբունքով, հավաքում, տեղափոխում, պահպանում և վնասազերծում է ժամկետանց դեղորայքի, բժշկական կոշտ և հեղուկ, ինչպես նաև վիրահատություններից առաջացած թափոնները:

Մինևոյն ժամանակ կոշտ կենցաղային փաթոնների համար թվով 59 համայնքներում կատարվել է հողհատկացում, սակայն փաստացի գործում է 9 աղբավայր: Աղբահանությունը մասնագիտացված բեռնատարերով իրականացվում է միայն քաղաքային բնակավայրերում, մասնակի կերպով, իսկ գյուղական բնակավայրերում միայն հարմարեցված տեխնիկական միջոցներով (ինքնաթափեր, լաֆետներ, այլ)

Մարզի բոլոր քաղաքներն ունեն կոյուղու համակարգ, որը սակայն միացված չէ գործող մաքրման կայաններին:

Մարզի տնային տնտեսությունների եկամուտների տեսանկյունից գտնվում է բավականին բարոք վիճակում: Եկամուտի այս մակարդակը հիմնականում պայմանավորված է տրանսֆերտների ամենամեծ ծավալով, մարզի յուրաքանչյուր բնակչի ամսական եկամտի շուրջ 19.4% կամ ամսական 13 510 ՀՀ դրամ կազմում են եկամուտները տրանսֆերտներից: Մարզի բնակչության եկամուտների շուրջ 23,80%-ը կազմում է եկամուտը գյուղմթերքի և կենդանիների վաճառքից, 2,07%-ը

ինքնագրադավաճությունից, 39,06%-ը վարձու աշխատանքից, 14,90%-ը Պետական թոշակներ և նպաստներ և 2,05%-ը այլ աղբյուրներից:

Արագածոտնի մարզում գրանցված են ավելի քան 4211 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որոնք կազմում են հանրապետության մարզային ցուցանիշի մոտ 6.9%-ը, այդ թվում՝ շուրջ 77 արտադրական ձեռնարկություններ և 562 առևտրային կազմակերպություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից են «Հայասի գրուպ» ԲԲԸ, «Թամարա Ֆրուտ» ՓԲԸ, «Աշտարակյան գինիներ» ՓԲԸ, «Գրեյդ Վելլի» ՓԲԸ, «Աշտարակի պոլիգրաֆիական գործարան» ԲԲԸ, «Աշտարակ-ձու» ՓԲԸ, «Ապարանի պանրի գործարան» ՓԲԸ, «Աշտարակ-կաթ» ԲԲԸ, «Գոլդեն գրեյպ Արմաս» ՍՊԸ և «Գնթունիք» ՍՊԸ:

Ձեռնարկությունների խտությունը 10 000 բնակչի հաշվով կազմում է 324.4:

ՀՀ Արագածոտնի մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերն են:

Արդյունաբերությունը մասնագիտացած է սննդամթերքի արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, ըմպելիքի արտադրությունն է կան խաղողի վերամշակման և գինու հումքի ստացման) ու շինանյութերի հանքավայրերի շահագործման ուղղություններում:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես հացահատիկային մշակաբույսերի արտադրություն) և անասնաբուծության մեջ: Մարզի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները նպաստավոր են ինչպես բուսաբուծության (հացահատիկ, կարտոֆիլ, բազմամյա տնկարկներ, կերային մշակաբույսեր), այնպես էլ անասնաբուծության զարգացման համար:

Մարզի կրթական համակարգը ընդգրկում է նախադպրոցական, հանրակրթական (տարրական, հիմնական և ավագ), միջին մասնագիտական (նախնական արհեստագործական և մասնագիտական) և բուհական համակարգերը:

▪ **Հողերի տնտեսական յուրացման բնութագիր**

Երկրաբանական ուսումնասիրության համար նախատեսված տեղամասերը ներառված է Արագածավան խոշորացված համայնքի Արագածավան բնակավայրի տարածքում: Խոշորացված համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Արագածավան, Արտենի, Գետափի և Լուսակն գյուղերը: Համայնքի կենտրոնը Արագածավան գյուղն է:

Համայնքի առկա բնակչության թիվը կազմել է 10021 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4800 և կանայք՝ 5221: Ըստ բնակավայրերի համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը բերված է աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8.

Ցուցանիշները	Ընդամենը համայնք	գ. Արագածավան	գ. Արտենի	գ. Գետափ	գ. Լուսակն
Առկա բնակչության թիվը, այդ թվում՝	10021	5960	3697	150	214
Տղամարդիկ	4800	2919	1694	73	114
Կանայք	5221	3041	2003	77	100
0-6 տարեկան , այդ թվում՝	811	518	258	14	21
7-17 տարեկան	1350	897	399	21	33
18-62 տարեկան	7015	3997	2759	101	158
63-ից բարձր տարեկան	845	548	281	14	2
Կենսաթոշակառուներ, այդ թվում՝					
Հաշմանդամության և աշխատանքային					
Փախստականներ	-	--	-	-	-
Միակողմանի ծնողազուրկ երեխաներ		9	21		
Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ			-		
Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ			-		
Արցախյան պատերազմի մասնակիցներ			-		
Հաշմանդամներ		136	98		
Նպաստառու ընտանիքների թիվը		231	109		
Հայրենական մեծ և արցախյան պատերազմներում զոհվածների ընտանիքների թիվը			4		
Արտագնա աշխատանքի մեկնող ունեցող տնային տնտեսությունների թիվը			130		

Խոշորացված համայնքի հողերն ըստ նշանակության ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9.

Հողերի նպատակային նշանակությունը	Հողատեսք, գործառնական նշանակություն	Համայնքների անվանումները				
		Արագածավան	Արտենի	Գետափ	Լուսակն	Ընդամենը
Գյուղատնտեսական	Վարելահող	3047.19	1601.24	525.41	548.99	5722.83
	Բազմամյա տնկարկներ, այդ թվում	697.07	298.56		203.98	1199.61
	Խոտհարք					0.00
	Արոտ	7009.93	1061.89	1138.49	2129.94	11340.25
	Այլ հողատեսքեր	907.55	478.14	102.87	178.97	1667.53
	ԸՆԴԱՄԵՆԸ	11661.74	3439.83	1766.77	3061.88	19930.22
Բնակավայրերի	Բնակելի կառուց.	184.50	145.47	18.65	10.40	359.02
	Հաս. կառուց.	11.73	6.09	2.70	0.25	20.77
	Խառը կառուցապատման	6.96				6.96
	Ընդհանուր օգտագործման	36.20	25.12	2.33	2.57	66.22
	Այլ հողեր	33.04	3.38	7.02	6.47	49.91
	ԸՆԴԱՄԵՆԸ	272.43	180.06	30.70	19.69	502.88
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության		211.65	27.96	6.57	6.05	252.23
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների		31.72	19.01	8.83	4.89	64.45
Հատուկ պահպանվող տարածքների		13.13	7.61	0.43	0.46	21.63
Հատուկ նշանակության				8.91	1206.09	1215.00
Անտառային		3.29		200.06		203.35
Ջրային		178.58	32.66	15.52	9.30	236.06
Պահուստային հողերի						0.00
Ընդամենը		12372.54	3707.13	2037.79	4308.36	22425.82

Համայնքի գյուղատնտեսության մեջ մեծ բաժին ունի բուսաբուծությունը: Մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաներ: Զբաղվում են պտուղների աճեցմամբ, բազմամյա տնկարկները գտնվում են տնամերձ հողակտորներում: Բուծում են մանր եւ խոշոր եղջերավոր անասուններ: Ունի կաթի մշակման և կաթնամթերքի արտադրության կետ:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքները ներկայացված են գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրերով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը ներկայացվել է համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը, հետագայում՝ պաշարների հաստատումից հետո, մշտական աշխատատեղեր ապահովող օգտակար հանածոյի արդյունահանման բացահանքի գործարկումը:

▪ ***Պատմության, մշակութային հուշարձաններ***

ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 29-ի թիվ 628-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Արագածոտնի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Արագածավան բնակավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ հաշվառված չեն:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Արագածի պեղիտի հանքավայրի «Արագած Պեղիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերին տարածքում ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում աննշան տեխնածին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Մեքենաների տեղաշարժի, հորատման աշխատանքների ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի և փոշու աննշան արտանետում: Բնապահպանական կառավարման միջոցառումները նախատեսելիս հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ սահմանված նորմերը՝ սահմանային թույլատրելի խտություններն (ՄԹԿ) ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի համար համապատասխանաբար կազմում է $5մգ/մ^3$, $0.2մգ/մ^3$, $0.15մգ/մ^3$ և $0.5մգ/մ^3$: Նախնական հաշվարկներին համաձայն, տեղամասերում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի օքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Մակերևութային ջրային ռեսուրսների աղտոտում չի ենթադրվում: Առաջին տեղամասը արևելքից և արևմուտքից սահմանափակող Սելավ-Մաստարայի չորահունները գործնականում ջրագուրկ են:

Երկրորդ տեղամասը հարավից սահմանակից է Թալինի ջրանցքի ձախ ճյուղին: Նշված հիդրոտեխնիկական կառույցը սեղանաձև կտրվածքով միաձույլ բետոնե ջրանցքը, որի հատակը միաձույլ բետոնից է, իսկ շեղերն իրականացված են հավաքովի երկաթ-բետոնե սալերով:

ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի թիվ 64-Ն որոշմամբ հաստատվել են անիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները: Համաձայն նշված որոշման հավելվածի նախատեսվում են

մակերևութային ջրային հոսքերի համար սահմանվում են ջրապահպան գոտիների տարածքներ մինչև 32 մետր երկարությամբ շերտի տեսքով: Ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքներում սահմանվում են անօտարելի գոտիների տարածքներ՝ մինչև 10 մետր երկարությամբ շերտի տեսքով:

Հիմք ընդունելով վերը նշվածը, Սելավ-Մաստարայի չորահունների ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման և Թալինի ջրանցքի ձախ ճյուղի անօտարելի գոտիների տարածքների սահմանման նպատակով հետախուզական հորատանցքերը տեղադրվելու են հուններից և հիդրոտեխնիկական կառույցից նվազագույնը 10մ հեռավորությունների վրա:

Ստորերկրյա ջրերի հորիզոններ տարածքում չկան, ինչի մասին վկայում է Արագածի պեռլիտի հանքավայրի շահագործման բազմամյա փորձը: Դա պայմանավորված է տարածքը կազմող հրաբխային ծագման ապարների ֆիզիկա-մեխանիկական հատկություններով, հատկապես բարձր ծակոտկենությամբ:

Ընկերության կողմից բնական ռեսուրսներից ջրառ չի կատարվելու, ջրցանի համար անհրաժեշտ տեխնիկական և աշխատակազմի խմելու ջուրը բերվելու է պայմանագրային հիմունքներով՝ մոտակա բնակավայրից:

Հողային ծածկույթ.

Հողային ծածկույթի վրա աննշան, կարճատև բացասական ազդեցություն է դրսևորվելու հորատման հարթակների կառուցման ժամանակ: Նոր ճանապարհներ չեն կառուցվելու, բարեկարգվելու է գոյություն ունեցող 3կմ երկարությամբ ճանապարհը: Դաշտային ճամբար չի նախատեսվում, աշխատակիցները տեղակայվելու են մոտակա Արագածավան բնակավայրում, հատուկ այդ նպատակով վարձակալված տանը, այդտեղ են կազմակերպվելու բոլոր անհրաժեշտ կենցաղային պայմանները՝ կեցավայր, լոգարան, սննդի վայր: Հետևաբար, դաշտային ճամբարի կառուցման համար հողերի օտարում նույնպես չի պահանջվում:

Բուսական և կենդանական աշխարհ.

Պեռլիտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես արդեն ներկայացվել է, հայցվող տարածքներում աճում են ՀՀ տարածքին կիսաանապատային լանդշաֆտային գոտիներին բնորոշ, լայն տարածում ունեցող օշինդրա-էֆեմերային բուսականության «ֆոնային» տեսակներ: ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներ տեղամասերում չեն արձանագրվել: Բուսական

բնական ծածկույթը խախտվելու է միայն հորատման հարթակների տարածքում, ազդեցությունը կրելու է կարճատև բնույթ:

Կենդանական աշխարհը նույնպես ներկայացված է ՀՀ տարածքում լայն տարածված տեսակներով, ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների ապրելավայրեր տեղամասերի շրջանում չկան:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված, անհետացման եզրին գտնվող բուսական կամ կենդանական տեսակների պահպանություն, տեղամասերի շրջանում չկան:

Բացառվում է նաև բացասական ազդեցության դրսևորում բնության հուշարձանների վրա, քանի որ մինչև մոտակա «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն և «Փոքր Արտենի» հրաբուխ բնության հուշարձանները նվազագույն հեռավորությունը կազմում է 4.49կմ :

Աղմուկ, թրթռումներ.

Աշխատանքների ժամանակ առաջանալու են աղմուկի և թրթռումների նոր աղբյուրներ: Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ: Պեռլիտների երկրաբանական ուսումնասիրության տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Ընդերքօգտագործման թափոններ.

- Հորատման հարթակներից հանված 144մ³ բաց-շագանակագույն և կիսանապատային գորշ հողերով ներկայացված հողաբուսական շերտը կարճատև կտրվածքով տեղադրվելու է հարթակի հարևանությամբ: Հողային շերտը չի հանդիսանում ընդերքօգտագործման թափոն: Հողաբուսական առաջացումները հրդեհավտանգ չեն, կոռոզիոն հասկություններով օժտված չեն, ռեակցիոնունակ չեն, թունավոր չեն շրջակա միջավայրի համար:

- Հորատման աշխատանքների արդյունքում առաջանալու են մաշված, որակական հատկությունները կորցրած հորատման թագիկներ: Հորատման թագիկների թափոնները բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են: ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N 430-Ն հրամանի հավելվածի ցանկում հորատման արդյունքում առաջացած հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն:

Հայցվող տարածքներում հորատումը և դրա հետ փոխկապակցված բոլոր աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից, այդ իսկ պատճառով «Արագած Պեռլիտ Գրուպի» ՍՊ ընկերության կողմից հորատման թագիկների թափոնների կառավարում չի նախատեսում:

- Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Արագածավան կամ Արտենի բնակավայրերում, համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում: Այդ պատճառով երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող բուն տեղամասերում նավթամթերքների մնացորդներ, սպառողական հատկությունները կորցրած յուղեր և քսայուղեր չեն կուտակվելու, դրանց կառավարման միջոցներ չեն իրականացվելու: Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ քսայուղերը դասվում են վտանգավորության 4-րդ դասին, իսկ սպառողական հատկությունները կորցրած յուղերը՝ վտանգավորության 3-րդ դասին:

- Կենցաղային աղբի հավաքվելու է հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվելու է մոտակա աղբահավաք կետեր, ինչի նպատակով ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ : Կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 91200400 01 00 4:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

a. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքներում նավթամթերքների պահեստավորման բացառում : Մեքենաների լիցքավորման, յուղերի, քսայուղերի փոխարինման աշխատանքները իրականացվելու են Արագածավան կամ Արտենի բնակավայրերում, համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող ընկերությունների տարածքում :

b. Կենցաղային աղբի հավաքում հատուկ տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր, ինչի նպատակով ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո պայմանագիր կկնքվի համայնքի հետ :

c. Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

d. Փոշենստեցման նպատակով ճանապարհի և հորատման հարթակների ջրում : Ըստ գործող նորմատիվների՝ $1մ^2$ տարածքի ջրցանման համար անհրաժեշտ տեխնիկական ջրի քանակը կազմում է 1,5լ: Անհրաժեշտ տեխնիկական ջրի ծավալը կորոշվի օրական կտրվածքով՝ կախված աշխատանքների վայրից, ծավալից, եղանակային պայմաններից, պայմանագրային հիմունքներով կզնվի և կտեղափոխվի տեղամասեր մոտակա բնակավայրերից :

e. Կեղտաջրերի հավաքում հորատի պ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով: Համապատասխան պայմանագիր կկնքվի մասնագիտացված ծառայություն մատուցող ընկերության հետ ընդերքօգտագործման իրավունքը ձեռք բերելուց հետո :

f. Հորատման հարթակների տարածքից հողաբուսական շերտի հանում 0.2մ հզորությամբ, կուտակում անմիջահետ հորատման հարթակի հարևանությամբ : Հորատման, նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո հողի շերտը վերականգնվելու է $720մ^2$ մակերեսով կամ $144մ^3$ ծավալով ($720մ^2 \times 0.2մ$): Վերականգնման աշխատանքները կատարվելու են ձեռքով: Պահեստավորված շերտը վերադարձվելու է հորատման հարթակի տարածք, հարթեցվելու է, փխրեցվելու է՝ վերին շերտի աերացիան ապահովելու համար: Տեղամասերից հյուսիս գտնվող Հակո և Կանչ գյուղերից նախատեսվում է տարածք տեղափոխել հնեցված գոմաղբ, բաց-շագանակագույն և գորշ հումուսով աղքատ հողերը պարարտացնելու համար: Այնուհետև հողերում ցրվելու են օշինդրի սերմ, որը տարածքի բնութագրիչ

բուսատեսակներից մեկն է: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է շրջակա միջավայրի պահպանության դրամազլխին հատկացնել 86.4 հազ.դրամ, որից 70.0 հազ.դրամը աշխատավարձ է, 10.0 հազ.դրամը՝ գոմաղբի գնման համար անհրաժեշտ գումարն է, իսկ 6400 դրամը նախատեսված է բույսերի սերմերի գնման համար:

գ. Աղմուկի և թրթռումների վերահսկողություն:

հ. Թռչունների բների հայտնաբերման դեպքում, դրանց տեղափոխում աշխատանքների վայրերից դուրս:

ի. Որոնողական երթուղիների ժամանակ ձեռնափայտով հարվածների իրականացում բնահողային հատվածին, որպեսզի ստեղծվի սողունների համար անհանգստացնող գործոն և դրանք ժամանակավորապես լքեն տարածքը և բացառվի մարդ-կենդանի հանդիպումը:

յ. Բեռների և աշխատակազմի փոխադրում գոյություն ունեցող ճանապարհներով՝ կենդանիների կենսամիջավայրի խախտումը բացառելու նպատակով:

կ. Աշխատանքներին մասնակցող անձնակազմի վերապատրաստում, նախքան դաշտային աշխատանքների սկիզբը ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

լ. Ընդերքօգտագործման թափոնների կառավարում՝ հորատման թագիկների հավաքում և հանձնում, 144մ³ հողաբուսական շերտի օգտագործում լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայի համար:

մ. Հանքի աշխատակիցների համար սանիտարակենցաղային հարմարությունների ստեղծում՝ հանդերձարան, զուգարան և հանգստի սենյակ մոտակա բնակավայրերում:

ն. Ըստ կիրառելիության՝ «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում:

օ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության հայտում և հետագայում՝ գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Հողերում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

բ. Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար՝ շարժական կապի միջոցների առկայություն հետախուզական աշխատանքներ իրականացնող անձնակազմի մոտ, առաջին բուժօգնության միջոցների առկայություն, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Տեղամասերում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

i. երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ հանքավայրը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում,

ii. հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ:

Բացահանքի տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

Արագածի պեռլիտի հանքավայրի «Արագած Պեռլիտ Գրուպ» 1-ին և 2-րդ տեղամասերում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում «Արագած Պեռլիտ Գրուպ» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացման ուղղված մի շարք մշտադիտարկումներ :

Տեղամասերի տարածքում ընկերությունը երկրաբանական ուսումնասիրության ընթացքում իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները (համաձայն «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման պահանջների)։


Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ (տեղամասերի տարածք)	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ(տեղամասերի տարածք)	Հողերի քիմիական կազմը, հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ (տեղամասերի և հարակից տարածք)	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Մշտադիտարկումների արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացվելու է ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն նախարարություն:

Շրջակա միջավայրի մոնիթորինգի դիտակետերի տեղադիրքը արտացոլված է նկար 10-ում :

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ընկերությունը նախատեսում է մասնահանել 200.0հազ.դրամ գումար:



Գրականություն

1. Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
8. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
9. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
10. ՀՀ Արագածոտնի մարզպետարան պաշտոնական կայք